«Սոցիոլոգիա և քաղաքագիտություն» առարկայի ծրագիր և ուսուցման մեթոդական ուղեցույց

միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների համար

Բացատրագիր

Դասընթացը բաղկացած է երկու մասից՝ սոցիոլոգիա և քաղաքագիտություն:

Բաժին 1. Սոցիոլոգիա

Ժամանակակից աշխարհում կարևորվում է կրթական գործընթացի հումանիզացման պահանջը, քանի որ նեղ մասնագիտական կրթության գերիշ-խանության պայմաններում գոյանում են մասնագիտական հանրություններ, որոնց ներկայացուցիչները միմյանց հետ հաղորդակցվելու ընդհանուր հումանիտար հիմքից զուրկ լինելու պատճառով, որպես կանոն, բախվում են: Կրթության մեջ տեխնիկական միջոցների ներդրման հարաճուն միտումներին դրականապես հակազդելու և ժամանակակից աշխարհում ի հայտ եկած մի շարք հասարակական հիմնախնդիրներ լուծելու տեսանկյունից ավելի ու ավելի է կարևորվում սոցիոլոգիա ուսանելու անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդավարացման գործընթացները պահանջում են գիտելիքներ այնպիսի հասկացությունների մասին, ինչպիսիք են՝ մշակույթը, անձը, հասարակությունը, կոնֆլիկտը և այլն: Հասարակական կյանքի կարևորագույն խնդիրների մասին գիտելիքները հնարավորություն են ընձեռում լինելու լիարժեք քաղաքացի, խորությամբ հասկանալու հասարակական գործընթացները:

Բաժին 2. Քաղաքագիտություն

«Քաղաքագիտություն» բաժնի հիմնական նպատակը սովորողների մոտ հասարակության քաղաքական կյանքի վերաբերյալ համակարգված գիտելիքների ձևավորումն է, որը կօգնի նրանց հասկանալու քաղաքական երևույթների ու գործընթացների էությունը, իմաստն ու նշանակությունը, կատարելու գիտակից քաղաքական ընտրություն և ակտիվ մասնակցություն ունենալու հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական զարգացումներին:

Դասընթացի հիմնական խնդիրներն են.

- Ծանոթացնել քաղաքագիտության առարկային և նրա առանձնահատկություններին:
- Գիտելիքներ հաղորդել քաղաքագիտության հիմնական կատեգորիաների վերաբերյալ, զարգացնել դրանց հետ գործողություններ կատարելու հմտություններ:
- Ծանոթացնել քաղաքական ինստիտուտների էությանն ու ֆունկցիաներին, քաղաքական կոնֆլիկտի կառուցվածքին ու զարգացման փուլերին:
- Օգնել հասկանալու ժողովրդավարության կարևորությունն իր և հասարակության համար: Ներկայացնել ՀՀ-ում ժողովրդավարության հաստատման առանձնահատկությունները:

Ուսումնական ծրագրի թեմատիկ պլանավորումը

NN	Թեմաները	Տեսական (ժամ)	Գործնական (ժամ)
	Բաժին 1. Սոցիոլոգիա		
1	Սոցիոլոգիայի առարկան	2	-
2	Մշակույթ	4	2
3	Հասարակություն	4	2
4	Անձ	2	2
5	Ընտանիք	2	-
6	Կոնֆլիկտ	2	2
7	Սոցիալական շարժունություն	2	-
	Բաժին 2. Քաղաքագիտություն		
8	Քաղաքագիտության առարկան և մեթոդները	2	-
9	Քաղաքական իշխանություն	2	2
10	Քաղաքական համակարգ	2	-
11	Քաղաքական ռեժիմներ	2	2
12	Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն	4	-
13	Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր	2	2

14	Քաղաքական գաղափարախոսություն	2	-
15	Քաղաքական կոնֆլիկտներ և դրանց հաղթահարման ուղիները	2	2
	Ընտրովի թեմա՝ ուսումնական հաստատության հայեցողությամբ	2	-
	Ընդամենը	38	16

Ուսուցման նպատակը, թեմաների ընդհանուր բովանդակությունը, սովորողի գիտելիքները և կարողությունները

Թեմա 1. Սոցիոլոգիայի առարկան

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակը սովորողներին սոցիոլոգիայի առարկան ներկայացնելն է: Թեմայի ուսուցումը նպատակ ունի մատնանշել այն խնդիրների շրջանակը, որոնցով զբաղվում է սոցիոլոգիան: Կներկայացվեն սոցիոլոգիայի բաղկացուցիչ մասերը, գործառույթները:

Թեմայի բովանդակությունը

Սոցիոլոգիայի առարկան և օբյեկտը: Սոցիոլոգիայի կառուցվածքը: Սոցիոլոգիայի գործառույթները: «Սոցիալականի» հասկացությունը: «Սոցիալական ինստիտուտ» հասկացությունը:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի սոցիոլոգիայի առարկան և օբյեկտը
- նկարագրի սոցիոլոգիայի առարկան
- համեմատի սոցիոլոգիան և պատմությունը

- թվարկի և բացատրի սոցիոլոգիայի գործառույթները
- մեկնաբանի «սոցիալականի» հասկացությունը
- արժևորի սոցիալական ինստիտուտի դերը հասարակական կյանքում:

Թեմա 2. Մշակույթ

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակը սովորողներին հասարակական կյանքի հիմնական երևույթներից մեկը՝ մշակույթը ներկայացնելն է: Թեմայի ուսուցումը նպատակ ունի սովորողներին հնարավորություն ընձեռել հասկանալու մշակույթը, դրա ձևերն ու տեսակները:

Թեմայի բովանդակությունը

«Մշակույթ» հասկացությունը: Մշակույթի տեսակները: Մշակույթի ֆունկցիաները (գործառույթները): Մշակույթի հիմնական տարրերը: «Էլիտար» և «զանգվածային» մշակույթ: Տեխնիկա և մշակույթ:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է՝

- իմանա «մշակույթ» հասկացության ստուգաբանությունը
- իմանա մշակույթի տեսակները
- թվարկի մշակույթի հիմնական գործառույթները
- տարբերակի մշակույթը և արվեստը
- բացատրի մշակույթի հիմնական գործառույթները
- տարբերակի էլիտար և զանգվածային մշակույթները
- մեկնաբանի էլիտար և մասսայական մշակույթների փոխհարաբերությունը ժամանակակից աշխարհում
- գնահատի տեխնիկայի ազդեցությունը մշակույթի վրա:

Թեմա 3. Հասարակություն

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակը սովորողներին «հասարակություն» հասկացության էությունը ներկայացնելն է: Թեմայի ուսուցումը նպատակ ունի ներկայացնել հասարակության պատմական զարգացումը:

Թեմայի բովանդակությունը

«Հասարակություն» հասկացությունը: Հասարակության պատմական զարգացման փուլերը. ագրարային հասարակություն, արդյունաբերական հասարակություն, հետինդուստրիալ հասարակություն: Քաղաքացիական հասարակություն: Հասարակական գործունեություն և հասարակական գործողություններ: Հասարակական փոփոխություններ:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի «հասարակություն» հասկացությունը
- թվարկի հասարակության պատմական զարգացման փուլերը
- բացատրի հասարակության պատմական զարգացման փուլերի էությունը
- համեմատի հասարակության պատմական զարգացման փուլերը
- բացատրի քաղաքացիական հասարակության էությունը
- մեկնաբանի «հասարակական գործունեություն» հասկացությունը
- բացատրի հասարակական գործողության իմաստը
- ներկայացնի հասարակական փոփոխությունների վերաբերյալ մի քանի մոտեցումներ:

Թեմա 4. Անձ

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակը սովորողներին «անձ» հասկացությունը և անձի սոցիոլոգիայի հիմնախնդիրները ներկայացնելն է: Թեմայի նպատակը անձ-հասարակություն հարաբերությունների հիմնհարցերը ներկայացնելն է:

Թեմայի բովանդակությունը

«Անձ» հասկացությունը: Սոցիալականացում, ապասոցիալականացում, վերասոցիալականացում: Անձի զարգացման հիմնախնդիրը: Անձի դերային կոնցեպցիան: Սոցիալական դեր: Սոցիալական կարգավիճակ:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի «անձ» հասկացությունը
- տարբերակի «անձ» և «անհատ» հասկացությունները
- նկարագրի անձի սոցիոլոգիայի հիմնախնդիրները
- բացատրի անձի զարգացման անհրաժեշտ նախապայմանները
- բացատրի սոցիալականացում, ապասոցիալականացում վերասոցիալականացում հասկացությունները
- թվարկի և նկարագրի անձի զարգացման շրջափուլերը
- սահմանի սոցիալական դեր հասկացությունը
- սահմանազատի սոցիալական կարգավիճակի տարատեսակները:

Թեմա 5. Ընտանիք

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակը սովորողներին «ընտանիք» հասկացության մասին հիմնարար գիտելիքներ հաղորդելն է: Թեմայի նպատակը ընտանիքի տիպերը և դրանց առանձնահատկությունները ներկայացնելն է:

Թեմայի բովանդակությունը

«Ընտանիք» հասկացությունը: Ընտանիքի սոցիոլոգիայի էությունը: Ընտանիքի պատմական տիպերը: Ժամանակակից ընտանիքի տիպերը: Ընտանիքի գործառույթները:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է՝

- ձևակերպի ընտանիքի սոցիոլոգիական սահմանումը
- նկարագրի ընտանիքի պատմական տիպերը
- թվարկի և նկարագրի ընտանիքի տեսակները
- բացատրի ընտանիքի գործառույթները
- համեմատի ժամանակակից ընտանիքի տիպերը:

Թեմա 6. Կոնֆլիկտ

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակը սովորողներին կոնֆլիկտի էությունը ներկայացնելն է: Թեման նպատակ ունի սովորողներին ներկայացնել կոնֆլիկտի պատճառները, տեսակները, փուլերը, ինչպես նաև դրական ու բացասական կողմերը:

Թեմայի բովանդակությունը

Կոնֆլիկտի էությունը: Կոնֆլիկտի դերը մարդու և հասարակության կյանքում: Կոնֆլիկտի դրական և բացասական կողմերը: Կոնֆլիկտի տեսակները: Մարդկանց վարքագիծը կոնֆլիկտային իրավիճակում: Կոնֆլիկտի փուլերը և կառավարումը:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի կոնֆլիկտը
- թվարկի կոնֆլիկտի առաջացման պատճառները
- գնահատի կոնֆլիկտի դերը մարդու և հասարակության կյանքում
- թվարկի կոնֆլիկտի դրական և բացասական կողմերը
- ներկայացնի կոնֆլիկտային իրավիճակներում մարդու վարքագծի մի քանի տեսակներ (նահանջող, մեղմացնող, փոխզիջման գնացող, խնդիր լուծող, հաղթանակ-պարտություն պարտադրող)
- թվարկի և նկարագրի կոնֆլիկտի փուլերը
- թվարկի և նկարագրի կոնֆլիկտի լուծման մի քանի ձևեր:

Թեմա 7. Սոցիալական շարժունություն

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակը սովորողներին սոցիալական շարժունություն երևույթի կարևորությունը ներկայացնելն է: Թեման նպատակ ունի սովորողներին ներկայացնել սոցիալական շարժունության կարևորությունը հասարակության զարգացման գործընթացում:

Թեմայի բովանդակությունը

«Սոցիալական շարժունություն» (մոբիլություն) հասկացությունը: Սոցիալական շարժունության ձևերը: Անհատական շարժունության վրա ազդող գործոնները: Ուղղահայաց շարժունության միջոցները:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է՝

- սահմանի «սոցիալական շարժունություն» հասկացությունը
- տարբերակի ուղղահայաց և հորիզոնական շարժունությունը և դրանց տարատեսակները
- իմանա անհատական շարժունության վրա ազդող գործոնները
- իմանա ուղղահայաց շարժունության միջոցների վերաբերյալ սոցիոլոգիական մի քանի տեսություններ:

Սեմինար պարապմունքների թեմաներ

Մշակույթ

- Մշակույթի տեսակները:
- Մշակույթի ֆունկցիաները:
- Էլիտար և զանգվածային մշակույթ:
- Տեխնիկա և մշակույթ:

Հասարակություն

- Հասարակության պատմական զարգացման փուլերը:
- Հետինդուստրիալ հասարակություն:
- Քաղաքացիական հասարակություն:

Անձ

- Անձ հասկացությունը:
- Սոցիալականացում, ապասոցիալականացում, վերասոցիալականացում:
- Սոցիալական դեր: Սոցիալական կարգավիճակ:

Կոնֆլիկտ

Կոնֆլիկտի դերը մարդու և հասարակության կյանքում:

- Կոնֆլիկտի տեսակները:
- Կոնֆլիկտի փուլերը և կառավարումը:

Քաղաքագիտություն

Թեմա 8. Քաղաքագիտության առարկան և մեթոդները

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին ծանոթացնել քաղաքագիտության ֆունկցիաներին ու մեթոդներին, ներկայացնել՝ ինչ է ուսումնասիրում քաղաքագիտությունը, ցույց տալ քաղաքագիտության՝ հասարակական այլ գիտությունների հետ ունեցած կապը:

Թեմայի բովանդակությունը

Քաղաքական գիտության ձևավորումն ու զարգացումը: Քաղաքագիտության օբյեկտը, առարկան: Քաղաքագիտության ֆունկցիաները, մեթոդները: Քաղաքագիտության տեղն ու դերը հասարակական գիտությունների համակարգում:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է.

- Իմանա քաղաքական գիտության ձևավորման ու զարգացման գենեզիսը:
- Հասկանա քաղաքագիտության՝ հասարակական մյուս գիտությունների հետ ունեցած կապերի ու փոխհարաբերությունների բնույթը:
- Տարբերակի քաղաքագիտության օբյեկտն ու առարկան և օրինակներ բերի:
- Թվարկի և ներկայացնի քաղաքագիտության ֆունկցիաներն ու մեթոդները:

Թեմա 9. Քաղաքական իշխանություն

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին գիտելիքներ հաղորդել քաղաքական իշխանության էության ու բովանդակության մասին, ծանոթացնել իշխանության «լեգիտիմություն» և «լեգալություն» հասկացություններին, բացատրել իշխանությունների տարանջատման սկզբունքի էությունը:

Թեմայի բովանդակությունը

Իշխանություն հասկացությունը: Իշխանության մեկնաբանման կոնցեպցիաները: Իշխանության աղբյուրները, օբյեկտը, սուբյեկտը և ռեսուրսները: Քաղաքական իշխանության ծագումն ու առանձնահատկությունները: Իշխանությունների տարանջատման սկզբունքը: Իշխանության լեգալություն և լեգիտիմություն:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է.

- Իմանա իշխանության մեկնաբանման հիմնական կոնցեպցիաները և ընդհանուր գծերով բնութագրի իշխանություն հասկացությունը:
- Իմանա քաղաքական իշխանության բնորոշ գծերը:
- Իմանա լեգիտիմության երեք հիմնական տեսակները:
- Հասկանա և բացատրի իշխանությունների տարանջատման սկզբունքի իմաստը:
- Բացատրի քաղաքական իշխանության ծագումը:
- Հիմնավորի քաղաքական իշխանության անհրաժեշտությունը հասարակության համար:
- Թվարկի իշխանության հիմնական բաղկացուցիչները և բացատրի դրանց էությունը:
- Տարբերակի «լեգիտիմություն» և «լեգալություն» հասկացությունները:

Թեմա 10. Քաղաքական համակարգ

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին ծանոթացնել հասարակության քաղաքական համակարգի էությանն ու ֆունկցիաներին, գիտելիքներ հաղորդել քաղաքական համակարգի կառուցվածքային տարրերի մասին:

Թեմայի բովանդակությունը

Քաղաքական համակարգ հասկացությունը, կառուցվածքն ու ֆունկցիաները: Քաղաքական համակարգի հիմնական տեսությունները (Հ. Ալմոնդ, Դ. Իստոն): Քաղաքական համակարգերի տիպաբանությունը:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է.

- Իմանա և ներկայացնի քաղաքական համակարգի կառուցվածքային տարրերը:
- Սահմանի «քաղաքական համակարգ» հասկացությունը:
- Մեկնաբանի քաղաքական համակարգի «մուտք» և «ելք» հասկացությունները, նկարագրի քաղաքական համակարգի և արտաքին միջավայրի փոխհարաբերությունները:
- Թվարկի քաղաքական համակարգի ֆունկցիաները:
- Թվարկի քաղաքական համակարգի տեսակներ՝ ըստ տարբեր չափանիշների:

Թեմա 11. Քաղաքական ռեժիմներ

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին ծանոթացնել ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմների էությանն ու բնորոշ գծերին:

Թեմայի բովանդակությունը

«Քաղաքական ռեժիմ» հասկացությունը: Քաղաքական ռեժիմների տիպաբանությունը. տոտալիտար, ավտորիտար, ժողովրդավարական ռեժիմներ: Տոտալիտարիզմի էությունը, առաջացման նախադրյալներն ու բնորոշ գծերը: Ավտորիտար ռեժիմներ և դրանց առանձնահատկությունները:

Ինչ է ժողովրդավարությունը: Ժողովրդավարության զարգացման պատմական էտապները: Անմիջական և ներկայացուցչական ժողովրդավարություն: Ժողովրդավարության հիմնական սկզբունքները: Հասարակության ժողովրդավարացման պայմանները (քաղաքական, տնտեսական և այլն):

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է.

- Իմանա՝ ինչ է քաղաքական ռեժիմը:
- Իմանա ավտորիտար քաղաքական ռեժիմի տարատեսակներն ու բնորոշ գծերը:
- Իմանա ժողովրդավարության զարգացման պատմական էտապները:

- Գաղափար ունենա ՀՀ-ում ժողովրդավարության հաստատման առանձնահատկությունների վերաբերյալ:
- Հասկանա՝ ինչ է ժողովրդավարությունը:
- Հասկանա, որ հասարակության ժողովրդավարացման համար որոշակի պայմաններ են անհրաժեշտ:
- Բացատրի տոտալիտարիզմի առաջացման նախադրյալները:
- Ներկայացնի տոտալիտարիզմի բնորոշ գծերն ու տիպերը:
- Տարբերակի ժողովրդավարության իրականացման անմիջական և ներկայացուցչական ձևերը, բացատրի դրանց էությունը:
- Թվարկի և մեկնաբանի ժողովրդավարության բնորոշ գծերը:
- Համեմատի ավտորիտար և տոտալիտար քաղաքական ռեժիմները, վեր հանի դրանց նմանություններն ու տարբերությունները:

Թեմա 12. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին ծանոթացնել «իրավական պետություն», «քաղաքացիական հասարակություն» հասկացություններին, դրանց միջև առկա փոխհարաբերությունների բնույթին:

Թեմայի բովանդակությունը

Իրավական պետության էությունն ու հիմնական սկզբունքները: Քաղաքացիական հասարակություն հասկացությունը, բնորոշ գծերը, ձևավորման նախադրյալները, կառուցվածքը: Իրավական պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունը:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է.

- Իմանա քաղաքացիական հասարակության բնորոշ գծերը:
- Իմանա քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնական նախադրյալները:
- Հասկանա՝ ինչ է քաղաքացիական հասարակությունը:

- Բացատրի՝ ինչպիսին է օրենքի և իրավունքի փոխհարաբերությունը իրավական պետությունում:
- Բացատրի իրավական պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերության բնույթը:
- Ներկայացնի քաղաքացիական հասարակության կառուցվածքային տարրերն ու դրանց դերակատարությունը:
- Թվարկի և մեկնաբանի իրավական պետության հիմնական սկզբունքները:

Թեմա 13. Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին գիտելիքներ հաղորդել քաղաքական կուսակցության էության, ֆունկցիաների մասին, ծանոթացնել կուսակցական համակարգ հասկացությանը, քաղաքական կուսակցությունների ու կուսակցական համակարգերի տիպաբանությանը:

Թեմայի բովանդակությունը

Քաղաքական կուսակցություն հասկացությունը: Քաղաքական կուսակցությունների առաջացումը, զարգացման փուլերը: Քաղաքական կուսակցությունների կառուցվածքը, տիպաբանությունն ու ֆունկցիաները: Կուսակցական համակարգի էությունն ու տիպաբանությունը: Բազմակուսակցական համակարգի ձևավորման առանձնահատկությունները ՀՀ-ում:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է.

- Իմանա քաղաքական կուսակցությունների պատմական զարգացումը:
- Իմանա և ներկայացնի երկկուսակցական և բազմակուսակցական համակարգերի առավելություններն ու թերությունները:
- Գաղափար ունենա ՀՀ-ում բազմակուսակցական համակարգի ձևավորման առանձնահատկությունների մասին:
- Սահմանի՝ ինչ է քաղաքական կուսակցությունը:

- Բացատրի, թե ինչումն է կայանում քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների տարբերությունը:
- Բացատրի զանգվածային կուսակցությունների առաջացման նախադրյալները:
- Բացատրի կուսակցական համակարգ հասկացությունը:
- Ներկայացնի քաղաքական կուսակցությունների կառուցվածքը:
- Տարբերակի միակուսակցական, երկկուսակցական, բազմակուսակցական համակարգերը:
- Թվարկի և մեկնաբանի քաղաքական կուսակցությունների ֆունկցիաները:
- Թվարկի քաղաքական կուսակցությունների տեսակներ՝ ըստ տարբեր չափանիշների:

Թեմա 14. Քաղաքական գաղափարախոսություն

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին գիտելիքներ հաղորդել քաղաքական գաղափարախոսության էության ու ֆունկցիաների մասին, ծանոթացնել հիմնական գաղափարախոսական հոսանքներին:

Թեմայի բովանդակությունը

Քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը: Քաղաքական գաղափարախոսության մակարդակներն ու ֆունկցիաները: Արդի գաղափարախոսական հոսանքներ՝ լիբերալիզմ, կոնսերվատիզմ, սոցիալիզմ, ֆաշիզմ:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է.

- Իմանա՝ ինչ է քաղաքական գաղափարախոսությունը:
- Հասկանա գաղափարախոսության դերը հասարակության քաղաքական կյանքում:
- Բացատրի լիբերալիզմի, կոնսերվատիզմի, սոցիալիզմի, ֆաշիզմի էությունը, դրանց առաջացման նախադրյալները:
- Ներկայացնի քաղաքական գաղափարախոսության մակարդակները:

- Թվարկի և մեկնաբանի քաղաքական գաղափարախոսության ֆունկցիաները:

Թեմա 15. Քաղաքական կոնֆլիկտներ և դրանց հաղթահարման ուղիները

Թեմայի ուսուցման նպատակը

Թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին գիտելիքներ հաղորդել քաղաքական կոնֆլիկտի էության, տիպերի, հաղթահարման ուղիների մասին, ներկայացնել կոնֆլիկտների կառուցվածքն ու զարգացման փուլերը:

Թեմայի բովանդակությունը

«Քաղաքական կոնֆլիկտ». էությունը, առաջացման պատճառները, կառուցվածքն ու զարգացման փուլերը: Քաղաքական կոնֆլիկտների տիպաբանությունը և ֆունկցիաները: Քաղաքական կոնֆլիկտների հաղթահարման մեթոդները: Ղարաբաղյան կոնֆլիկտ:

Թեմայի ուսուցման արդյունքում սովորողը պետք է.

- Իմանա և ներկայացնի կոնֆլիկտի կառուցվածքային տարրերն ու զարգացման փուլերը:
- Բացատրի քաղաքական կոնֆլիկտի էությունն ու առաջացման պատճառները:
- Վերլուծի ղարաբաղյան կոնֆլիկտի կառուցվածքը՝ օգտագործելով ձեռք բերված գիտելիքները և համապատասխան տեղեկատվական նյութեր:
- Ներկայացնի քաղաքական կոնֆլիկտների հաղթահարման մեթոդները:
- Թվարկի քաղաքական կոնֆլիկտների դրական և բացասական ֆունկցիաները:
- Թվարկի քաղաքական կոնֆլիկտների տեսակներ՝ ըստ տարբեր չափանիշների:

Սեմինար պարապմունքների թեմաներ

Քաղաքական իշխանություն

- Իշխանության մեկնաբանման կոնցեպցիաները:

- Իշխանության ռեսուրսները:
- Իշխանությունների տարանջատման սկզբունքը:
- Իշխանության լեգիտիմություն և լեգալություն:

Քաղաքական ռեժիմներ

- Ավտորիտար և տոտալիտար քաղաքական ռեժիմների բնորոշ գծերը:
- Ժողովրդավարության իրականացման ձևերը:
- Ժողովրդավարության բնորոշ գծերը:

Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր

- Ժամանակակից քաղաքական կուսակցությունների առաջացման նախադրյալները:
- Քաղաքական կուսակցությունների ֆունկցիաները:
- Միակուսակցական, երկկուսակցական և բազմակուսակցական համակարգեր:

Քաղաքական կոնֆլիկտներ և դրանց հաղթահարման ուղիները

- Քաղաքական կոնֆլիկտի առաջացման պատճառները:
- Քաղաքական կոնֆլիկտի կառուցվածքը:
- Քաղաքական կոնֆլիկտների հաղթահարման մեթոդները:

Գրականություն

Սոցիոլոգիա

Պարտադիր գրականություն

1. Գ.Մելքումյան, Մշակութաբանություն, Երևան, 2001
2. Ս.Պետրոսյան, Ս.Խաչատրյան և ուրիշներ, Հասարակագիտության ինտեգրված ուսուցում, Երևան, 2005
3. ԸՐՏվ Հ. ՆՑՈտօ ՐՈջՉՌՑՈ՝ րՏՓՈՏսՏչՌփպրՍՏռ ՎօրսՌ. Օ. 1993
4. ԽՐՈՉփպվՍՏ Ը.Լ. հՏՓՈՏսՏչՌ՝, Օ. 1999.
5. իոՏՐՏՉրՍՌռ թ.ժ. ԿոքՈ՝ րՏՓՈՏսՏչՌ՝, ժՍՈՑպՐՌվոցՐչ, 1999.
6. խպՉՈՊՈ Շ.Ը. խպՍՓՌՌ տՏ րՏՓՈՏսՏչՌՌ, Օ.1994.
7. ԽՏՎՈՐՏՉ Օ.հ. ԹՉպՊպվՌպ Չ րՏՓՈՏսՏչՌ՝, Օ. 1994.
8. Օպվ՝ՊՐՈ Ը. Կրվ՝ՏՉօ րՏՓՈՏսՏչՌՌ, Օ. 1999
9. Ղպվպվ՝ՍՏ, Շ.Թ. հՏՓՈՏսՏչՌ՝, Օ. 2008.
10. հսՏՉՈՐՖ տՏ րՏՓՈՏսՏչՌՌ, ծՌՋվՌռ ծՏՉչՏՐՏՊ, 1995

Լրացուցիչ գրականություն

1. ԼՏվՌվ խ.թ. հՏՓՈՏսՏչՌ՝ ՍցսՖՑցՐօ, Օ. 1996.
2. իՊՐՈՉՈՎօրսՏՉ Ը.թ. հՏՓՈՏսՏչՌ՝ ՍՏվԻսՌՍՑՈ, Օ. 1996.
3. հՏՓՈՏսՏչՌ՝: ղՐպրՑՏՎՈՑՌ՝ /տՏՊ ՐպՊ. Ը.Լ.ԽՐՈՉփպվՍՏ/, Օ. 1997.
4. ՂՐՏՎՎ Ն. ԼՎպՑՖ ՌսՌ ոօՑՖ, Օ, 1990.
5. Թպոպ՝Ր Օ. ԼջոՐՈվվօպ տՐՏՌջՉպՊպվՌ՝, Օ. 1990.

Քաղաքագիտություն

Պարտադիր գրականություն

1. Ռ. Հ. Պետրոսյան, Քաղաքագիտություն, Երևան 2004
2. Ա.Փ. Ենգոյան, Արդի դարաշրջանի հիմնական գաղափարախոսական հոսանքները, Երևան 2002
3. Քաղաքագիտության ներածություն, խմբ. Ի. Ս. Բալյան, Երևան 1996
4. Կ. Հ. Ղահրամանյան, Քաղաքագիտություն, Երևան 2005
5. Ա. Փ. Ենգոյան, Քաղաքական կոնֆլիկտներ (դասախոսությունների նյութեր), Երևան 2003
6. կՏսՌՑՏսՏչՌ՝. ձփպովՏպ տՏրՏՈՌպ Պս՝ Ցպւվ. ՉցջՏՉ /տՏՊ ՐպՊ. Ճ. Ը. ԹՈրՌսՌՍՈ, ՃՏրՍՉՈ 2002.
7. Թ. կ. կցչՈփպՉ, Ը. Լ. հՏսՏՉՖպՉ ԹՉպՊպվՌպ Չ տՏսՌՑՏսՏչՌ՝: ձփպովՏպ տՏրՏՈՌպ, ՃՏրՍՉՈ 1996.
8. Հ. Ջ. ՃցւՈպՉ, կՏսՌՑՏսՏչՌ՝, ՃՏրՍՉՈ 1998.
9. կՏսՌՑՏսՏչՌ՝ տՏՊ ՐպՊ. ծ. Լ. ՃՈՑցջՏՉՈ, ՃՏրՍՉՈ 1999.
10. Շ.Թ.ԼՐւՌվ, Թ. ժ. հՏՑՏՉ, խ. Թ. հՏՑՏՉՈ կՏսՌՑՏսՏչՌ՝, ՃՏրՍՉՈ 1999.
11. Ը.Լ.հՏսՏՉՖպՉ, կՏսՌՑՏսՏչՌ՝: կՏսՌՑՌփպրՍՈ՝ ՑպՏՐՌ՝, տՏսՌՑՌփպրՍՌպ ՑպւվՏսՏչՌՌ, ՃՏրՍՉՈ 2005.
12. Խ.հ. ՔՈՊՋՌպՉ, ԹՉպՊպվՌպ Չ տՏսՌՑՏսՏչՌ՝: ձփպովՏպ տՏրՏՈՌպ, ՃՏրՍՉՈ 1995.
13. կՏսՌՑՏսՏչՌ՝ Պս՝ ՝ՐՌրՑՏՉ: ԽցՐր սպՍՓՌռ /տՏՊ ՐպՊ. ծ. Լ. ՃՈՑցջՏՉՈ, Ը. Թ. ՃՈսՖՍՏ, ՃՏրՍՉՈ,1999.

Լրացուցիչ գրականություն

1. Հ. ԸՐՏվ, ժպվՏՍՐՈՑՌ՝ Ռ ՑՏՑՈսՌՑՈՐՌջվ, ՃՏրՍՉՈ 1993
2. Հ. ժՈսՖ, ԹՉպՊպվՌպ Չ ՑպՏՐՌ՝ ՊպվՏՍՐՈՑՌՌ, ՃՏրՍՉՈ 1992
3. Հ. ժՈսՖ, Կ ՊպվՏՍՐՈՑՌՌ, ՃՏրՍՉՈ 2000

4. Մ. ՇՏվՑպրՍՖպ, Կ Պցւպ ջՈՍՏվՏՉ. ԼջոՐՈվվօպ տՐՏՈջՉպՊպվՌ՝, ՇՏրՍՉՈ 1955
5. ԸՐՈՌՑՏՑպսՖ, կՏսՈՑՈՍՈ. հՏփՈվպվՌ՝, ՇՏրՍՉՈ 1983
6. կսՈՑՏվ, թՏրցՊՈՐրՑՉՏ. հՏփՈվպվՌ՝, ՇՏրՍՉՈ 1972
7. ԺՉ. խՏՍՍ, Կ չՏրցՊՈՐրՑՉպվվՏՎ տՐՈՉսպվՌՈ, ՇՏրՍՉՈ 1960
8. թ. թպչպսՖ, ՂՈսՏրՏԻՈ՝ տՐՈՉՈ, ՇՏրՍՉՈ 1990
9. Ը. խպռտւՈՐՑ, ԺպՎՏՍՐՈՑՈ՝ Չ ՎվՏչՏրՏրՑՈՉվօւ ՏոքպրՑՉՈւ. հՐՈՉվՈՑպսՖվՏպ ՌրրսպՊՏՉՈվՌպ, ՇՏրՍՉՈ 1997
10. Ը. Պպ ՉՏՍՉՈսՖ, ԺպՎՏՍՐՈՑՈ՝ Չ ԸՎպՐՈՍպ, ՇՏրՍՉՈ 1992

Կաբինետի կահավորումը

Պարապմունքների ժամանակ ցանկալի է լսարանում ունենալ էլեկտրոնային գրատախտակ, համակարգիչ, պրոյեկտոր: Սեմինար պարապմունքների ժամանակ անհրաժեշտ է սեղանների դասավորությունը հարմարեցնել փոքր խմբերով աշխատանքին:

Ուսուցման մեթոդներ

Մեթոդական հնարներ

Հասկացությունների աղյուսակ

Կուտակված տեղեկատվությունը քննարկելուց հետո անհրաժեշտություն է առաջանում այն դասակարգելու և տեղաբաշխելու՝ հետագայում ավելի նպատակային գործածելու համար: Հասկացությունների համեմատման, համակարգման միջոց է հասկացությունների աղյուսակը: Այն հատկապես օգտակար է, երբ համեմատվում են երեք կամ ավելի հասկացություններ (առարկաներ): Աղյուսակը կազմվում է համեմատվող հասկացություններից յուրաքանչյուրին մեկ տող, իսկ դրանց համեմատման հատկանիշներին՝ մեկական սյունակ տրամադրելու միջոցով: Սյունակների քանակը պայմանավորված է այն հանգամանքով, թե հասկացություններն ինչ խորությամբ և ծավալով են համեմատվում: Օրինակ, հասկացությունների աղյուսակով կարելի է միմյանց հետ համեմատել Հայաստանի մի քանի մարզերն՝ ըստ որոշ ընդհանուր գծերի:

Հատկանիշներ / Մարզեր	Տարածքը	Բնակչության քանակը	Կլիմայական պայմանները
Արարատի			
Տավուշի			
Արագածոտնի			

Գեղարքունիքի			

Հասկացությունների աղյուսակներ կարելի է կազմել և՛ անհատապես, և՛ խմբերով: Նման աղյուսակները սովորաբար պարունակում են խմբավորումների արդյունքում ստացած տեղեկատվությունը, սակայն հնարավորություն են ընձեռում պարզ ու հստակ դասդասել առավել ցայտուն փաստերը, որոնք մեկ այլ մեթոդով արդեն կարելի է ավելի խորն ուսումնասիրել:

Տ-աձև աղյուսակ

Տ-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և՛ կազմակերպական ձևով, և՛ կառուցվածքով: Այն, ինչպես նախորդ ձևերը, կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով **Տ** տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/ հակադրություն արտա-հայտող արձագանքների գրառման համար:

Օրինակ, աշակերտները կարող են անդրադառնալ Տ-աձև աղյուսակին, երբ պատրաստվում են անհատական կամ խմբովի որևէ նախագիծ իրականացնել՝ կապված շրջապատի էկոլոգիական խնդիրների հետ:

Դրական կողմեր **Բացասական կողմեր**



Տ-աձև աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս՝ թե՛ բնագիտական, թե՛ հումանիտար:

m-աձև աղյուսակ

m-աձև աղյուսակը ևս գծագրական դասակարգիչ է, կառուցվածքով T-աձև աղյուսակի մեկ այլ տարբերակ, որը միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) արտահայտելու հարմար միջոց է: Այն նույնպես կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Սա երեք բաժնից կազմված աղյուսակ է, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումները, բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երեք տարբեր պատասխանների (այո/ոչ/չգիտեմ, կողմ/դեմ/ձեռնպահ) կամ համադրություն/հակադրություն/չեզոք վերաբերմունք արտահայտող արձագանքների գրառման համար:

Օրինակ, աշակերտները կարող են ևս մեկ անգամ անդրադառնալ T-աձև աղյուսակում ամփոփված խնդրին և վերանայել իրենց վերաբերմունքը՝ երկու բևեռներից բացի մի երրորդ՝ չեզոք դիրքորոշմամբ դիտարկելով այն:

Դրական կողմեր	Չեզոք կողմեր	Բացասական կողմեր

m-աձև աղյուսակը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Այն կարող է գործածվել թե' անհատական աշխատանքի, թե' խմբային քննարկումների ժամանակ:

Հասկացությունների քարտեզ

Հասկացությունների քարտեզ (concepts map) կոչվող այս հնարը մասնագիտական գրականության մեջ հաճախ հանդիպում է նաև գաղափարների քարտեզ կամ հասկացությունների քարտեզագրում անվանումներով: «Քարտեզը» սկսում են

կազմել հետևյան կերպ: Նախ շրջանի մեջ է առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը՝ օրինակ «Ազգային փոքրամասնություն»: Այնուհետև առանձին «ազգային» հասկացության շուրջ գրի են առնվում ուղեկից բառեր՝ ասենք «մշակույթ», «վարքագիծ», «կրոն», «սովորույթներ» և այլն: Ապա նույն կերպ գրառվում են «փոքրամասնություն» հասկացությանն առնչվող բառերն ու գաղափարները.

Քարտեզի «ճյուղերը» տարածվում են նաև ցանկացած ուղեկից բառից դուրս բխելով: Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են նյութի ուսումնասիրման խորությունից, հետաքրքրությունների շրջանակից: Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է «ծնող բառի» հետ, իսկ միևնույն «ծնողն» ունեցող բառերը վերցվում են մի շրջանի մեջ որպես ուսումնասիրման մեկ ոլորտ (Ինչպես նշված է գծագրի Ա-ով նշված ճյուղում):

Քարտեզագրման ընթացքում առավելագույնս բազմաճյուղ պատկեր ստանալուց հետո սովորողներին առաջարկվում է պայմանական նշաններ օգտագործել, ինչպես ընդունված է ցանկացած քարտեզ կազմելիս: Այսպիսով, ընդգծվում են այն գաղափարները, որոնց շուրջ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն հավաքել: Խոշոր հարցական նշաններ են դրվում այն գաղափարների մոտ, որոնք անհրաժեշտ է ճշգրտել: Հաստատական որևէ նշան է դրվում այն բառերի կամ հասկացությունների մոտ, որոնց ուսումնասիրությունը բավարար կամ ավարտված ենք համարում: Որոշակի նշաններով առանձնացվում են հատուկ հետաքրքրություն ներկայացնող գաղափարները: Նշանների կիրառմանը կարելի է ստեղծագործաբար մոտենալ: Կարևորն այն է, որ արդյունքում ստացվի մի պատկեր, որին հաջորդելու է որոշակի գաղափարների նպատակային ուսումնասիրություն:

Անկյուններ

«Անկյունները» ուսուցման բանավեճային մեթոդական հնար է, որն ակտիվացնում է սովորողների համագործակցային ուսուցումն ու խմբային աշխատանքը, խթանում կառուցողական փաստարկներ ձևավորելու, հակափաստարկներ բերելու, հիմնավորելու և եզրահանգումներ անելու կարողությունները: «Անկյունները» կարող են դառնալ երկու և ավելի տեսակետներ ծնող, հակասական հարցերի շուրջ ծավալված բանավեճերի կառավարման աշխույժ և ակտիվ միջոց: Դասի ընթացքում

այն կարող է հաջորդել տեքստի ընթերցմանը, դասախոսությանը, ֆիլմի դիտմանը կամ պարզապես աշակերտներին հետաքրքրող որևէ թեմայի: Այս մեթոդի իմաստն այն է, որ մասնակիցները պետք է ներկայացված խնդրի վերաբերյալ որևէ դիրքորոշում ընդունեն և պաշտպանեն այն: Ընթացքում մասնակիցները պետք է ուշադիր լսեն միմյանց, քանի որ նրանց հնարավորություն է տրվում դիմացինի փաստարկների համոզիչ և տրամաբանական լինելու դեպքում ճշգրտել իրենց տեսակետները, նույնիսկ փոխել իրենց կարծիքը և պատկերացումները: Սակայն արդյունքում ակնկալվում է, որ յուրաքանչյուր աշակերտ ի վերջո ձևավորում է սեփական դիրքորոշումն ու տեսակետը, ինչի մասին կարող է ինքնուրույն գրավոր փաստարկել:

Ընթացքը

Սովորողների հետաքրքրությունների շրջանակում գտնվող որևէ կարևոր խնդրի, թեմայի (պատմվածքից, ֆիլմից, հոդվածից...) շուրջ կազմակերպվում է քննարկում:

- Բաժանվում են անհատական թերթիկներ, որոնց վրա աշակերտները շարադրում են իրենց կարծիքը (թերթիկները կարող են անանուն լինել):
- Որոշվում են դասասենյակի ակյուններն ըստ հետևյալ ցուցանակների.

ՄՀ -միանգամայն համաձայն եմ,

Հ - համաձայն եմ,

Դ - դեմ եմ,

ԿԴ - կտրականապես դեմ եմ:

Սակայն հաճախ քննարկումների ժամանակ դժվար է լինում հստակ սահման դնել «համաձայն եմ» և «միանգամայն համաձայն եմ» կամ «դեմ եմ» և «կտրականապես դեմ եմ» դիրքորոշումների միջև: Ուստի անկյունները կարող են լինել նաև երեքը.

- Կողմ եմ
- Դեմ եմ
- «Չեմ կողմնորոշվում» կամ «Մեկ այլ (երրորդ) տարբերակ եմ առաջարկում»

Անկյունների քանակի առաջադրումը հիմնականում կախված է լինում քննարկվող թեմայից, նրանում արծարծվող խնդիրներից: Առավել արդյունավետ է լինում, երբ առաջարկվում է դիրքորոշման առնվազն 2-3 տարբերակ: Ուսուցիչը կարող է նաև դիրքորոշումները սահմանել նախօրոք կամ էլ մտքերի տարափի միջոցով աշակերտների հետ հանգել մի քանի տեսակետների:

Ուսուցչի հրահանգից հետո.

- Ըստ իրենց դիրքորոշման մասնակիցները տեղափոխվում են այն անկյունը, որին համապատասխանում է իրենց թերթիկում նշվածը:
- Նույն անկյունում հանդիպողները ողջունում են իրար և հանդես են գալիս որպես մեկ թիմ և քննարկումներ են անցկացնում: Այս ընթացքում կազմակերպված մտքերի տարափը նպատակ ունի հավաքագրել բոլոր այն գաղափարները, որոնք միավորում են նրանց:
- Սկզբնական քննարկման ժամանակ նպատակահարմար է, որ թիմի անդամների քանակը 5-ից չանցնի: Սակայն մեթոդի ընթացքն այնպիսին է, որ մի անկյունում համակարծիք մասնակիցների թիվը կարող է ավելանալ (կամ պակասել):
- Մասնակիցներից մեկն ընտրվում է որպես խոսնակ խմբի արդեն ձևակերպված կարծիքը բոլորին ներկայացնելու համար:
- Բոլոր խմբերի փաստարկված կարծիքներն ու համապատասխան հիմնավորումները լսելուց հետո մասնակիցներին առաջարկվում է ճշտել իրենց նախնական վերաբերմունքը, դիրքորոշումը և, եթե կարծիքի մեջ փոփոխություն կա, տեղափոխվել համապատասխան անկյուն:
- Անհրաժեշտ է խրախուսել տեղափոխությունները՝ խնդիրը բազմակողմանի ընկալելու նպատակով (ուսուցիչն ինքը, որպես մասնակից, կարող է համոզիչ փաստարկ լսելու դեպքում փոխել խումբը՝ օրինակ ծառայելու համար):
- Վերջում աշակերտներին հանձնարարվում է անհատապես գրավոր ձևակերպել, շարադրել իրենց վեջնական կարծիքը:

Աշակերտներին տարբեր անկյուններում տեղի ունեցող քննարկումներին մասնակից դարձնելու նպատակով ուսուցիչը կարող է մեթոդը կիրառել մասնավոր տարբերակով:

Սկզբնական կարծիքներով թերթիկները հավաքելուց հետո դրանք կամայականորեն բաժանվում են մասնակիցներին, և աշակերտը գործում է ըստ իրեն բաժին ընկած թերթիկի: Այս դեպքում սովորողը ստիպված է լինում պաշտպանելու անգամ այն կարծիքը, որին ինքն իրականում դեմ է: Սա, անկասկած, ուսումնական տեսակետից արդյունավետ է, քանի որ ստիպում է կողմնակի հայացքով դիտարկել սեփական մոտեցումները: Այսպես քննարկումները շարունակվում են տարբեր դիրքերից, և գաղափարները պաշտպանվում են ըստ համապատասխան տեսակետի:

Այնուհետև մասնակիցների տեղափոխություն է կատարվում ըստ իրենց թերթիկների, և նրանց հնարավորություն է տրվում քննարկումներն անցկացնել սեփական համոզմունքի հիման վրա:

Հարցի բազմակողմանի քննարկման արդյունքում արվում են եզրակացություններ և ամփոփում, ինչն էլ օգնում է յուրաքանչյուրին ի վերջո սեփական վերաբերմունք մշակել և հանդես գալ անհատական զեկույցով:

Փոխներգործուն գրառումների համակարգ /ՓԳՀ/ մեթոդը

Տեքստերի (հատկապես՝ սկզբնաղբյուրների) հետ արդյունավետ աշխատելու համար համար կարևոր է Փոխներգործուն գրառումների համակարգի կիրառումը:

Փոխներգործուն գրառումների համակարգ /ՓԳՀ/ մեթոդը արդյունավետ է կարդալու միջոցով նյութի ընկալման ընթացքը վերահսկելու համար:

Ընթերցելով նյութը՝ սովորողները նշումներ են կատարում՝ օգտագործելով ՓԳՀ-ի հետևյալ նշանները.

V = հաստատում է իմ իմացածը(գիտեմ)

+ = նոր տեղեկատվություն է (չգիտեմ)

- = իմացածին հակասում է

? = անհասկանալի է

! = հետաքրքիր է, կարելի է քննարկել

Այս նշանների օգտագործումը ընթերցանության ընթացքում նպաստում է ակտիվ, քննադատական ուսուցմանը՝ նորը, հակասականը և անհասկանալին ընդգծելու առումներով:

ՓԳՀ նշանների առատությունը արտահայտում է ընթերցողի ակտիվության աստիճանը և տեքստի հետ կատարած աշխատանքի արդյունավետությունը:
Նյութը արդյունավետ յուրացնելու համար օգտակար է, որ յուրաքանչյուր սովորող իր համար կատարի դասակարգում և կազմի աղյուսակ հետևյալ ձևով.

V	+	-	?	!

Այնուհետև կարելի է կազմակերպել զույգերով, խմբերով մտքերի փոխանակություն, նյութի քննարկում կամ բանավեճ:

Աղյուսակի երրորդ և չորրորդ բաժինները կարելի է նաև տալ որպես հանձնարարություն՝ այլ աղբյուրներից լրացուցիչ տեղեկատվություններ քաղելու և գիտելիքները խորացնելու համար:

Տարրական դասարանների սովորողների հետ աշխատելիս նպատակահարմար է օգտագործել ՓԳՀ-ի առաջին երկու նշանները (V, +):

Մեթոդներ

6.1. Խճանկար (Ջիգսո) (Jigsaw)

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին:

Խճանկարը Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդից տարբերվում է նրանով, որ աշակերտները խորամուխ են լինում նյութի որոշակի ասպեկտի մեջ:

Խճանկարի փուլերը

Խճանկար մեթոդն ունի հետևյալ փուլերը.

Փուլը	*Նկարագրությունը*
Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում	Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի «փորձագետ»: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություն:
Աշխատանք փորձագիտական խմբում	Փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում են, հարստացնում են իրենց նյութերը:
Աշխատանք ուսումնական խմբում	Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:
Ավարտական աշխատանք	Աշակերտները անհատական ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից:
Ամփոփում	Արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Վերոնշյալ փուլերով անցնելիս ուսուցիչը պետք է կատարի հետևյալ քայլերը:

Քայլ 1. Հենակետային խմբերի ձևավորումը

Խմբեր ձևավորելիս անհրաժեշտ է առաջնորդվել է Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդի մոտեցմամբ: Այսինքն, խմբերում պետք է հավասարապես ընդգրկվեն բարձր, միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտներ: Հնարավորության սահմաններում պետք է պահպանել նաև սեռային հավասարությունը: Խմբերի ձևավորումից հետո անհրաժեշտ է անցկացնել թիմ ձևավորող վարժություն:

Խմբի ձևավորումից հետո հայտարարվում են խմբային աշխատանքի կանոնները: Օրինակ՝

- առաջադրանքի իրենց հատվածն ավարտելուց հետո աշակերտները պետք է մնան խմբի հետ այնքան ժամանակ, մինչև բոլորն ավարտեն:
- խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է, որպեսզի բոլորը հասկանան և ի վիճակի լինեն կատարելու առաջադրանքը:
- եթե կան հարցեր, անհասկանալի հատվածներ, ապա աշակերտը նախևառաջ դիմում է իր թիմակիցների օգնությանը, հետո նոր ուսուցչին:

Կանոնները ընդունելուց հետո, ուսուցիչը ձևակերպում է առաջադրանքը: Հիմնական խմբի անդամները միմյանց աջակցելով ընթերցում են ամբողջ նյութը (եթե կիրառվում է Խճանկար-2-ը), ապա քննարկում անհասկանալի հասկացությունները, հատվածները:

Քայլ 2. Փորձագիտական խմբերի ձևավորումը

Երբ աշակերտները ծանոթանում են ամբողջ նյութին, հիմնական խմբի յուրաքանչյուր անդամ ստանում է իր առաջադրանքը և փորձագիտական թերթիկը: Առաջադրանքը կարող է լինել նյութի առանձին հատվածի ուսումնասիրություն, կարող է լինել խնդրի որոշակի ասպեկտի վրա կենտրոնացում:
Առաջադրանքը ստանալուց հետո աշակերտները հավաքում են նյութեր իրենց ենթաթեմայի վերաբերյալ: Ապա փորձագիտական խմբի ընկերների հետ կիսում են իրենց նյութերը, կատարում ճշգրտումներ: Փորձագիտական խմբի անդամները նաև որոշում են, թե ինչ մեթոդներ, ձևեր, աղյուսակներ են օգտագործելու իրենց հիմնական խմբի անդամներին սովորեցնելու ընթացքում:

Փորձագիտական խմբերում նույնպես պետք է (առանձին դեպքերում՝ կախված դասի նպատակից կարելի է նաև առաջադիմության գործոնը հաշվի չառնել) ընդգրկել տարբեր առաջադիմությամբ աշակերտների: Ստորև բերվող աղյուսակում պարզորոշ երևում է, թե ինչպես պետք է ձևավորվեն հիմնական և փորձագիտական խմբերը:

Հենակետային խմբեր(Study or Base group)

1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ	4-րդ խումբ
Արմեն (բ.ա.)[1]	Արուսյակ (բ.ա.)	Դավիթ (բ.ա.)	Սոնա(բ.ա.)
Լուսինե (մ.ա.)	Գևորգ (մ.ա.)	Գոհար (մ.ա.)	Սահակ (մ.ա.)
Լևոն (մ.ա.)	Աննա (մ.ա.)	Գագիկ (մ.ա.)	Անի (մ.ա.)
Անահիտ (ց.ա.)	Մկրտիչ (ց.ա.)	Հայկանուշ (ց.ա.)	Բագրատ (ց.ա.)

[1]բ.ա.- բարձր առաջադիմություն, մ.ա. - միջին առաջադիմություն, ց. ա. - ցածր առաջադիմություն

Փորձագիտական խմբեր

1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ	4-րդ խումբ
Արմեն	Արուսյակ	Դավիթ	Սոնա
Աննա	Լուսինե	Գևորգ	Լևոն
Սահակ	Գագիկ	Անի	Գոհար
Հայկանուշ	Բագրատ	Անահիտ	Մկրտիչ

Կարևոր է նաև փորձագիտական թերթիկների մշակումը: Դրանք աշակերտներին կօգնեն կենտրոնանալ հիմնական հարցերի վրա:
Օրինակ, ենթադրենք Քաղաքագիտություն դասընթացի ժամանակ ուսումնասիրում եք 4 երկրի՝ Հայաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի և Իսպանիայի քաղաքական համակարգերը: Յուրաքանչյուր փորձագիտական խմբի հանձնարարում եք ուսումնասիրել մեկ երկիր: Բոլոր խմբերին կարող եք տալ հետևյալ փորձագիտական թերթիկը.

Փորձագիտական թերթիկի նմուշ

1.
2. Օրենսդիր իշխանություն:
3. Գործադիր իշխանություն:

Հիմք ընդունելով այս թերթիկը, բոլոր փորձագիտական խմբերը երկրները ուսումնասիրում են ըստ այդ չափանիշների:

Քայլ 3. Փորձագետները սովորեցնում են հենակետային խմբի անդամներին

Փորձագիտական խմբերում աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները վերադառնում են հենակետային խմբեր: Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է իր ենթաթեման, պարզում, թե որքանով են իր դասընկերները յուրացրել այն:

Քայլ 4. Գնահատում

Խճանկարի ժամանակ գնահատումը պետք է իրականացնել 3 մակարդակներով: Առաջին, պարզել, թե որքանով են խմբերը արդյունավետ գործում, որքանով են բարելավվել աշակերտների համագործակցային աշխատանքի հմտությունները: Երկրորդ, որքանով են աշակերտները առաջադիմել առանձին խնդիրներ ուսումնասիրելու և դրանք իրենց դասընկերներին սովորեցնելու առումներով: Երրորդ, որքանով է յուրաքանչյուր աշակերտ յուրացրել ուսումնական նյութը, առաջադիմել:

Խմբային գործընթացի գնահատում

Խմբային գործընթացը գնահատելիս անհրաժեշտ է պարզել, թե որքանով են աշակերտները արդյունավետ գործել որպես խմբի անդամներ: Սա ներառում է խոսելու, լսելու, մտքերը կիսելու, խմբին օգնելու հմտությունները: Օրինակ՝ կարելի է ձևակերպել հետևյալ հարցերը.

- Արդյո՞ք խմբի բոլոր անդամներն էին մասնակցում,
- Խմբում կայի՞ն գերիշխող աշակերտներ,
- Խմբային հաղորդակցումը աջակցող է՞ր:

Փորձագիտական աշխատանքի գնահատում

Այս դեպքում գնահատվում են աշակերտների փորձագիտական աշխատանք կատարելու հմտությունները: Օրինակ՝ ուսումնական նյութերի, սկզբնաղյուրների հետ աշխատելու, նշումներ կատարելու, դասընկերներին սովորեցնելու հմտությունները:

Նյութի բովանդակության յուրացման գնահատում

Գնահատման այս ձևը կիրառելիս անհրաժեշտ է օգտագործել **Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդում** ներկայացվող գնահատման նմուշը: Գնահատվում են և առանձին աշակերտները, և խմբերը: Վերջում անհրաժեշտ է ամփոփել արդյունքները, խրախուսել առաջադիմած աշակերտներին և խմբերին:

Խճանկար մեթոդի կիրառության օրացույց

ՄԵԹՈԴԸ	Դաս 1	Դաս 2	Դաս 3	Դաս 4	Դաս 5
Խճանկար	Նոր թեմայի ներկայացում, հիմնական խմբերի ձևավորում, ենթաթեմաների բաժանում (Դասից հետո լրացուցիչ նյութերի ձեռքբերում)	Նյութերի մշակում	Աշխատանք փորձագիտական խմբերում	Աշխատանք հիմնական խմբերում	Ավարտական աշխատանք, ամփոփում

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ

Մեթոդի նկարագրությունը և նպատակը

Ժամանակակից դիդակտիկայի մեջ կիրառվող մեթոդների ցանկում կարևոր տեղ ունի ուսումնական բանավեճը (դիսկուսիա լատիներեն՝ disscussio-հետազոտություն, քննարկում): Հաճախ այն ավելի արդյունավետ է, քան մի շարք այլ մեթոդներ:

Ուսումնական բանավեճը *մտքերի, դրույթների, կարծիքների նպատակամետ և որոշակիորեն կարգավորված փոխանակություն է*՝ հանուն ճշմարտության որոնման, ընդ որում բոլոր սովորողները այդ փոխանակության կազմակերպման մասնակիցներն են: Բանավեճի նպատակամղվածությունն ամենևին չի նշանակում դրա ենթակա լինելը ուսուցման այն խնդիրներին միայն, որոնք կարևոր են ուսուցչի համար: Ավելին, նոր ուսումնական նյութի որոնման՝ յուրաքանչյուրին պարզորոշ ձգտումը, հիմք կարող է դառնալ հետագա ինքնուրույն աշխատանքի համար: Բանավեճի նպատակը ոչ այնքան սովորողների՝ միմյանց տրված հարցերի ու դրանց պատասխանների պարզ հերթագայությունն է, որքան խնդրո առարկա հիմնահարցի բուն քննարկումն ու կազմակերպական ջանքերը, պայմանով, որ մասնակիցների կողմից պահպանվում են քննարկման անցկացման կանոնները:

Բանավեճը, ի տարբերություն զրույցի, բովանդակային առումով սովորաբար սահմանափակվում է *մեկ առանձին թեմայով* կամ հիմնահարցով և կառուցվում է *որոշակիորեն սահմանված կարգով*: Քանի որ այստեղ խիստ կարևորվում է յուրաքանչյուրի առանձին կարծիքն ու հայացքները և հարգալից վերաբերմունքը մյուսների կարծիքների նկատմամբ, բանավեճի ընթացքում բացառվում է խոսողին ընդհատելը: Թեպետ շատ դեպքերում բանավեճը կարող է զգացմունքային բնույթ ստանալ, այն երբեք արդյունքում վեճի չպետք է վերածվի: Այլ կերպ ասած, բանավեճը չպետք է վիճաբանություն դառնա: Բանավեճը կարող է բնականոն ընթացք ունենալ այն դեպքում միայն, եթե բոլոր մասնակիցները ձգտում են հասնել առաջադրված ընդհանուր նպատակին:

- Ուսումնական բանավեճի գլխավոր նպատակը իմացական հետաքրքրության խթանումն է:
- Բանավեճն ուղղված է սովորողների կողմից նոր գիտելիքների ձեռքբերմանը, սեփական կարծիքի ամրապնդմանը, այն պաշտպանելու կարողության զարգացմանը:
- Ձիջելով զրույցի մեթոդին տեղեկատվության հաղորդման արդյունավետության առումով, բանավեճը բարձր արդյունավետություն է հանդես բերում տեղեկատվության ամրապնդման, ուսումնասիրվող նյութի ստեղծագործական ընկալման և արժեքային կողմնորոշման ձևավորման առումով:

Ընթացքը

❖ **Բանավեճի սկիզբը**

Բանավեճի անցկացման ընթացքում մի շարք դժվարություններ կարող են առաջանալ: Դրանց մի մասը հաճախ կապվում է բանավեճի սկզբի հետ: Քանի որ այն պակաս կանոնակարգված է, քան ուսումնական աշխատանքի մյուս տեսակները, ուսուցիչը պետք է հոգ տանի, որպեսզի աշակերտները հստակ պատկերացում ունենան բանավեճի առարկայի, ընդհանուր շրջանակների. ինչպես նաև դրա անցկացման կարգի վերաբերյալ: Բանավեճ կազմակերպելիս պետք է ուշադրություն դարձնել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ ձևավորելու վրա: Այսպես, սովորողների դասավորությունը պետք է այնպես կազմակերպել (օրինակ՝ շրջանաձև), որպեսզի յուրաքանչյուր մասնակից տեսնի մյուսների դեմքը:

Բովանդակային առումով կարևոր է թեմայի, հիմնահարցի նախնական բացատրությունը: Ներածական մասը սովորաբար կազմակերպվում է այնպես, որպեսզի ակտիվացվեն սովորողների գիտելիքները, տրվեն անհրաժեշտ տեղեկատվություններ խնդրո առարկա հարցի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար:

Ներածական մասը ցանկացած բանավեճի անցկացման կարևոր և անհրաժեշտ բաղադրատարրն է: Այն կազմակերպելու տարբեր եղանակներ կարող են լինել: Դրանցից է, օրինակ, հարցի համառոտ քննարկումը փոքր (չորսից-վեց աշակերտից կազմված) համագործակցային խմբերում: Կարելի է նաև նախապես մեկ կամ մի քանի աշակերտի հանձնարարել դասարանի առաջ հանդես գալ հիմնահարցը ներկայացնող հաղորդումով: Երբեմն ուսուցիչը կարող է համառոտ նախնական հարցում անցկացնել:

Ընդհանուր առմամբ կարելի է թվարկել բանավեճը սկսելու մի շարք տարբերակներ.

- հիմնահարցի ներկայացում,
- դիաֆիլմի կամ կինոֆիլմի ցուցադրում,
- ուսումնական նյութի (առարկայի, պատկերային նյութի և այլն) ցուցադրում,
- փորձագետի հրավիրում (իբրև փորձագետ կարող են հանդես գալ խնդրին լավատեղյակ մարդիկ),
- նոր տեղեկությունների հաղորդում,
- ձայնագրությունների ունկնդրում,
- բեմականացում, որևէ դրվագի դերային ներկայացում,
- խթանող հարցեր, ինչպիսիք են՝ «ի՞նչ», «ինչպե՞ս», «ինչո՞ւ» և այլն:

Փորձը ցույց է տալիս, որ ներածական հնարներից ցանկացածի կիրառումը պետք է ենթադրի ժամանակի ոչ մեծ կորուստ, որպեսզի հնարավոր լինի արագորեն անցնել բանավեճի բուն ընթացքի կազմակերպմանը:

❖ Բանավեճի բուն ընթացքը

Բանավեճի անցկացման ընթացքում ուսուցչից զգալի վարպետություն է պահանջվում, որպեսզի նրա մասնակցությունը կարգադրիչ դիտողությունների կամ սեփական տեսակետների արտահայտման բնույթ չստանա: Բովանդակային առումով ուսուցչի ունեցած հիմնական գործիքն այստեղ *հարցերն*[*] են: Հարցերի ճիշտ կիրառում և ընթացիկ քննարկման առանցքային կողմերի գրանցում գրատախտակին - ահա առաջին հայացքից ոչ բարդ հնարները, որոնք սովորաբար կիրառում է փորձառու ուսուցիչն այս դեպքում: Կարևոր է, սակայն, հարցերի բնույթը: Երբեմն հարցը, որ տրվել է քննարկումը խթանելու համար, կարող է նաև հակառակ

[*] Տես նաև Զրույցին և Հարցերին վերաբերող բաժինները:

արդյունքն ունենալ: Այդ պատճառով փորձառու ուսուցիչներն այդ դեպքում նախընտրում են չմիջամտել, *դադար տալ*՝ աշակերտներին մտածելու հնարավորություն տալու համար: Ելակետային ոչ ճիշտ հասկացությունները կամ փաստական տեղեկությունները կարիք չկա խորացնել նոր հարցադրումներով: Այդ դեպքում ավելի արդյունավետ է ուսուցչի բացատրող, տեղեկացնող, բայց և միաժամանակ՝ հակիրճ խոսքը: Հաճախ կիրառվող միջոցներից է նաև աշակերտի խոսքի, մանավանդ եթե այն հստակորեն չի ձևակերպված, համառոտ *վերաշարադրանքը*: Ոչ ճիշտ արտահայտություններին կամ պնդումներին պետք է անպայման անդրադառնալ, պահպանելով մանկավարժական տակտը:

Եվս մեկ, նախընտրելի մեթոդական միջոց է սկսած *միտքը շարունակելու առաջարկը*, մանավանդ եթե այն ձևակերպվում է անուղղակիորեն («ինձ թվում է, հարցի քննարկումը կարելի է շարունակել նաև հետևյալ ուղղությամբ…», «դա ճիշտ է իհարկե, բայց կարելի է դիտել նաև այս առումով…:»): Այդ դեպքում ոչ միայն ելույթ ունեցողն է ձգտում ավելի ամբողջական ու բազմակողմանի ներկայացնել իր տեսակետը, այլև ավելի է մեծանում լսարանի հետաքրքրությունը քննարկվող հարցի նկատմամբ, քան ուսուցչի ուղղակի հարցերին սովորողների կողմից տրվող պատասխանների դեպքում: Ուսումնական բանավեճն ընդհանրապես պետք է անցկացվի բարյացակամության և յուրաքանչյուր մասնակցի նկատմամբ ուշադրության մթնոլորտում:

❖ Բանավեճի ամփոփումը

Բանավեճի ընթացքում և տվյալ ուսումնական պարապմունքի ավարտին ուսուցիչը սովորաբար որևէ կերպ ամփոփում է բանավեճի արդյունքները: Այդ ամփոփումը կարող է հետևյալ ձևակերպումն ունենալ.

- հիմնական թեմայի վերաբերյալ ասվածի ամփոփում,
- ներկայացված տվյալների, փաստական տեղեկությունների վերաբերյալ ընդհանուր ակնարկ,
- բանավեճի ընթացիկ քննարկում,
- մինչ այդ արված եզրակացությունների վերաձևակերպում, վերաշարադրանք,
- հանրագումար, ակնարկ այն ամենի մասին, ինչն արդեն քննարկվել է,
- հարցեր, որոնք հետագա քննարկման կարիք ունեն:

Ինչպես ընթացիկ, այնպես էլ եզրափակիչ ամփոփումը պետք է լինի հակիրճ, բովանդակալից և հնարավորինս ամբողջականորեն արտահայտի ներկայացված բոլոր տեսակետները: Միաժամանակ, այն պետք է ելակետային լինի հաջորդ թեմայի ոուսումնասիրության համար:

Մ ե թ ո դ ի ա ռ ա վ ե լ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը

- **Ընկալման աստիճանի բացահայտումը**

Բանավեճը ցույց է տալիս, թե խումբը ինչ չափով է հասկացել քննարկվող հարցերը: Այն լրացուցիչ, առավել կանոնակարգված մեթոդների կիրառման պահանջ չի առաջադրում:

- **Գիտելիքների ակտիվ փոխանցում**

Եթե դասախոսությունը խմբի հետ աշխատանքի ավելի խնայողական եղանակ է, ապա բանավեճը ավելի կայուն արդյունք ապահովող միջոց է: Մասնավորապես դա ճիշտ է այն դեպքում, երբ քննարկման բովանդակությունը հակադիր է մասնակիցներից գոնե մի քանիսի դիրքորոշումներին, կամ վիճելի հարցերի տեղիք է տալիս:

- **Ակտիվ փոխազդեցություն**

Բանավեճը խմբի ներգրավվածության բարձր մակարդակ է ենթադրում: Հնարավոր է, որ սովորողների մի մասը սկզբում չցանկանա միանալ քննարկմանը, բայց եթե թեման և հարցերը լավ են մտածված, դժվար է անհաղորդ մնալ և ի վերջո չներգրավվել բանավեճին:

Մ ե թ ո դ ի ս ա հ մ ա ն ա փ ա կ ո ւ մ ն ե ր ը

- **Թեմայից շեղվելու հավանականություն**

Բանավեճի, որպես մեթոդի, կիրառման վտանգներից մեկը թեմայից հեշտությամբ շեղվելու մեծ հավանականությունն է: Խմբի ուշադրությունը անհրաժեշտ հունի մեջ պահելուն կարող է օժանդակել հենց սկզբում բանավեճի առարկայի, թեմայի և կանոնների հիշեցումը:

- **Մեծ կախվածությունը խմբից**

Բանավեճի որակը զգալիորեն կախված է մասնակիցների պատրաստվածության մակարդակից: Այդ հանգամանքը պետք է նկատի ունենալ բանավեճին մասնակից խումբ ընտրելիս:

❖ **Ոչ ճիշտ դիրքորոշման հանգելու հավանականություն**

Բանավեճն անկասկած երևույթներին նոր հայացքով նայելու հրաշալի հնարավորություն է տալիս: Չնայած դրան, հնարավոր է, որ խմբի մասնակիցների մի մասը քննարկման արդյունքում շարունակի հաստատուն մնալ իր հայացքների մեջ և անգամ ամրապնդի դրանք:

Բանավեճի անցկացման կանոններ

- Ցանկացած միտք, արտահայտություն, պնդում պետք է հիմնավորվի փաստերով:
- Յուրաքանչյուր մասնակից պետք է արտահայտվելու հնարավորություն ունենա:
- Պետք է խոսել կարճ և քննարկումը չդարձնել որևէ մեկի մենաշնորհը:
- Ամեն մի դիտողություն, տեսակետ պետք է ուշադրությամբ ուսումնասիրվի:
- Քննարկման ընթացքում անթույլատրելի է անձը վիրավորելը, պիտակավորելը, վիրավորական խոսքերը և վարքագծի նմանատիպ այլ դրսևորումները:
- Ելույթները պետք է կազմակերպված բնույթ կրեն, յուրաքանչյուր մասնակից կարող է խոսել միայն նախագահողի (վարողի) թուլտվությամբ, կրկնակի ելույթները կարող են լինել հիմնական ելույթներից հետո, անթույլատրելի է «լեզվակռիվը» մասնակիցների միջև:

Գնահատվող բանավեճ

Նկարագրությունը և նպատակը

Սովորաբար բանավոր պատասխանի դեպքում աշակերտը դասարանին պատմում է այն ամենը, ինչ գիտե տվյալ թեմայի վերաբերյալ: ***Գնահատվող բանավեճը*** նման է խճանկարի, որի յուրաքանչյուր մասնիկը ամբողջի անբաժանելի մասն է: Ոչ մի աշակերտ չի կարող գերիշխել բանավեճում, քանի որ ցանկացած ելույթի համար ժամանակը խիստ սահմանափակ է (5-15 վայրկյան) և միայն խմբի անդամների բոլոր կարծիքները միասին կարող են քննարկվող թեմայի հստակ պատկերը կազմել:

Գնահատվող բանավեճը կարելի է համեմատել «ընկերական հանդիպման» հետ: Այդպիսի հանդիպումներում կարծիքների և տեղեկությունների փոխանակումը շատ անկեղծ է, քանզի ոչ ոք հսկողություն չի իրականացնում, որպեսզի մի քանի րոպեից արտահայտի տվյալ թեմայի վերաբերյալ «միակ ճշմարիտ» տեսակետը: Գնահատվող բանավեճի, ինչպես և փոքր խմբերով հանդիպման դեպքում, մասնակիցները ձգտում են բանավեճին ներգրավել բոլորին՝ ինքնաբուխ կերպով հայտնելով իրենց կարծիքն ու ունեցած տեղեկությունը:

Դպրոցում դասի ժամանակ ուսուցիչը հաճախ գերիշխող դիրք ունի: Գնահատվող բանավեճի դեպքում, աշակերտներին հնարավորություն է տրվում զրուցել ընկերների հետ, լսել, թե նրանք ինչ են մտածում:

Լինելով ավանդական գրավոր ստուգման այլընտրանքը, գնահատվող բանավեճը հնարավորություն է տալիս զարգացնելու աշակերտների ստեղծագործական կարողությունները՝ ազատելով ուսուցչին գրավորների մի ամբողջ կույտ ստուգելու հոգսից: Գնահատվող բանավեճը չի փոխարինում գրավոր աշխատանքի կամ բանավոր ստուգման գնահատմանը, այլ օգնում է ուսուցչին սովորողներին գնահատել կարևոր հմտությունների համար, իսկ աշակերտին հնարավորություն է տալիս դրսևորելու իր գիտելիքները:

Ընթացքը

Բանավեճի 6-8 մասնակիցներ շրջանաձև նստում են դասարանի կենտրոնում, իսկ մյուսները ուսուցչի հետ միասին տեղավորվում են նրանց շուրջը և լսում: Ուսուցիչը միավորներ է տալիս մասնակիցներից յուրաքանչյուրին՝ բանավեճում ունեցած ներդրման համար: Բանավեճը տևում է 8-20 րոպե՝ կախված թեմայից և սովորողների տարիքից: Թեմայից չշեղվելու համար բանավեճի մասնակիցներն առաջնորդվում են նախապես կազմված պլանով:

Գնահատվող բանավեճի հիմնական կանոնը

Բանավեճի ընթացքում վարքագծի ցանկացած տեսակ արժանանում է խրախուսական կամ տուգանային միավորների, որոնք գրանցվում են գնահատման թերթիկում (տես՝ թեմայի վերջում):

Ուսուցիչը խրախուսական միավորներ է տալիս՝

- քննարկվող հիմնահարցի նկատմամբ որոշակի դիրքորոշում ունենալու, այլ խոսքով՝ աշակերտի «կողմնորոշման» համար
- փաստերի վրա հիմնված կամ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության տրամադրման համար
- թեմային հավատարիմ մնալու (թեմայից չշեղվելու) համար
- մեկ ուրիշ աշակերտի՝ բանավեճի մեջ ներգրավելու համար:

Վերջին կետը ապահովում է մասնակիցների ակտիվությունը և կանխում բանավեճում աշակերտների մի մասի մենաշնորհային դիրքը:

Աշակերտները կարող են խրախուսական միավորներ ստանալ նաև ճշգրտող հարցերի և բանավեճը առաջ տանելու համար: Լսելու կարողության զարգացմանը նպաստում է միավորներ ստանալը քաղաքավարի վերաբերմունքի և ուշադրության համար այն դեպքում, երբ ինչ-որ մեկի պատասխանը հեռու է նախապես սահմանված թեմայից կամ էական չէ բանավեճի համար: Խրախուսական միավորներ կարելի է տալ նաև համեմատություն անցկացնելու համար, ինչը վկայում է մտածողության բարձր մակարդակի մասին և նպաստում բանավեճի զարգացմանը:

Տուգանային միավորներ կարելի է տալ՝

- ընդհատելու,
- բանավեճի անցկացմանը խոչընդոտելու,
- մենաշնորհային դիրքի ձգտելու,
- անձի դեմ ուղղված (անձնական բնույթի) ելույթի,
- ոչ էական դիտողություններ անելու համար:

Գնահատվող բանավեճը երեխաներին մեծ բավականություն է պատճառում, հատկապես երբ աշակերտները ներողություն են խնդրում որևէ մեկի խոսքն ընդհատելու համար: Աշակերտը միավորներ չի կորցնում այն դեպքում, երբ քաղաքավարությամբ նահանջում է (դուրս է գալիս քննարկումից): Լուրջ թերություն է համարվում բանավեճը մենաշնորհելու ձգտումը, քանի որ մյուսները զրկվում են քննարկմանը մասնակցելու և հետևաբար՝ միավորներ վաստակելու հնարավորությունից: Ոչ էական դիտողությունները տուգանային միավորների են արժանանում

անկախ այն բանից,թե մասնակիցներից որևէ մեկը մատնանշել է դա, թե ոչ: Իբրև ոչ էական դիտողություն են որակավորվում բանավեճի ընթացքում արդեն օգտագործված տեղեկատվության կրկնումը և թեմային չառնչվող դիտարկումները:

Տուգանային միավորների օգնությամբ ուսուցիչը կարող է կարգուկանոն պահպանել և սրել բանավեճին ներկա աշակերտների ուշադրությունը: Ուսուցիչը հաղորդում է նրանց, որ բանավեճի սկզբից սկսած նրանք կարող են տուգանային միավորներ ստանալ առանց լրացուցիչ զգուշացման: Այդ միավորները հանվում են տվյալ աշակերտի ստացած միավորների ընդհանուր գումարից: Բանավեճի ավարտից հետո ուսուցիչը հաշվում է աշակերտների ստացած միավորները:

Ինչպես հաղթահարել գնահատման դժվարությունները

Միավորներ դնելը բանավեճի ընթացքում մի մարդու համար առաջին հայացքից կարող է դժվարին գործ թվալ, բայց իրականում այն բավականին հեշտ է:

Աշակերտներին բանավիճային խմբերում բաժանելուց հետո պետք է նախապատրաստել նրանց համար գնահատման թերթիկներ:

Վարքագծի ցանկացած տեսակի համար Ա, Բ, Գ, Դ, Ե սյունակներում պետք է գրել խմբի անդամների անունները: Ամեն անգամ, երբ աշակերտները որոշակի բնույթի վարքագիծ են դրսևորում, պետք է նրանց անվան դիմաց նշան դնել:

Հավանաբար գնահատվող բանավեճին հատուկ է սուբյեկտիվիզմը, բայց այն ավելին չէ, քան գրավոր աշխատանքների գնահատման դեպքում: Գնահատվող բանավեճը կիրառած ուսուցիչները հաստատում են, որ միավորներ տալը սովորաբար արդարացի է լինում: Ընդ որում, նրանք արագորեն գիտակցում են, որ համապատասխան քանակի միավորներ դնելու համար հաճախ բավարար է լինում նաև պատասխանի սկիզբը: Այսպես, երբ լսվում էր՝ «Կարծում եմ, որ...», «Իմ կարծիքով, դա...», «Եթե դա ինձանից կախված լիներ...», դա արդեն պարզորոշ վկայում է, որ աշակերտը որոշակի վերաբերմունք ունի հիմնահարցի նկատմամբ: Փաստերի վրա հիմնված տեղեկատվության օրինակներ են (արժանանում է 2 միավորի) անունները, փաստական այլ տվյալները՝ վերցված դասագրքից կամ տեղեկատվական այլ աղբյուրներից:

Բանավեճում ունեցած ցանկացած ներդրման համար աշակերտը միավորներ է ստանում միայն մի կատեգորիայի գնահատման թերթիկում. նույնիսկ եթե անգիր

արտասանում է 3 փաստ միաժամանակ, ստանում է միայն 2 միավոր: Բացառություն է կազմում միայն լրացուցիչ խրախուսանքը (1 միավոր) մեկ ուրիշին բանավեճի մեջ ներգրավելու համար:

Քանի որ ուսուցիչը չպետք է ընդհատի բանավեճի ընթացքը, ցանկալի է, որ նա քննարկման ընթացքում իր համար որոշ նշումներ անի և բացատրություն տա բանավեճի ավարտից հետո: Այսպես, կարող են լինել փաստերի սխալ ներկայացում, որոշակի հասկացություններ, որոնք պետք է առանձնացնել և պնդումներ, որոնք պետք է քննարկել ամբողջ դասարանով: Բանավեճի ավարտից հետո ուսուցիչը պետք է ամփոփի ինչպես բանավեճի ընթացքը, այնպես էլ այնտեղ հնչած փաստերն ու ներկայացված գաղափարները:

Բանավեճի ավարտից հետո աշակերտները պետք է իմանան, թե քանի միավոր են ստացել: Նրանցից յուրաքանչյուրը կարող է իր համար գնահատման առանձին ամփոփաթերթ ստանալ: Դրա համար պետք է նախապատրաստել համապատասխան թվով թերթիկներ, որտեղ նշվում են ոչ միայն յուրաքանչյուրի ստացած միավորները, այլև ընդհանուր դիտողություններն ու, անհրաժեշտության դեպքում, համապատասխան գնահատման բացատրությունները:

Թերթիկներ լրացնելը ավելի քիչ ժամանակ է պահանջում, քան տվյալ թեմայով գրավոր աշխատանք ստուգելը: Պետք է աշակերտներին նախապես զգուշացնել, որ նրանք կրկնության հնարավորություն չունեն, և ուսուցչի նշանակած միավորները պետք է ընդունել որպես վերջնական արդյունք:

Ուսուցչից բացի, գնահատման գործընթացին կարող են մասնակից դառնալ նաև աշակերտները: Այս դեպքում պետք է լրացուցիչ ջանքեր գործադրել՝ գնահատման անաչառությունն ապահովելու համար:

Բանավեճի պլանը

Պլանը գնահատվող բանավեճի հիմնական տարրերից է: Այն օգնում է աշակերտներին տեղեկատվության որոնման, նշումների կարգավորման և բուն բանավեճի անցկացման մեջ: Վերջինս, ի դեպ, հիշողության վարժանքի բնույթ չպետք է կրի, և պետք է աշակերտներին թույլատրվի (անգամ՝ խրախուսվի) նշումներից օգտվել: Բացի այդ, փոքր խմբի յուրաքանչյուր մասնակից պետք է պատրաստ լինի

քննարկելու պլանի ցանկացած կետ: Այլ խոսքով, չի կարելի նախապես բաշխել դերերը և դրանով իսկ բանավեճը վերածել անհատական ելույթների շարքի:

Պլանը որոշում է ցանկացած տեղեկատվության կազմակերպման եղանակը, դրանով իսկ այն դարձնելով բանավեճին առավելագույնս հարմար: Աշակերտների կողմից նյութի դասդասման այս եղանակը շատ նման է որևէ թեմայի գրավոր ուսումնասիրության: Նյութի այսպիսի կազմակերպումը ոչ միայն սովորողներին մանրամասն ծանոթացնում է ինֆորմացիային, այլ օգնում է հիշել այն նաև դրանից հետո:

Կարող է հարց առաջանալ, թե ով պետք է կազմի բանավեճի պլանը՝ ուսուցիչը, թե՞ աշակերտները: Աշակերտների համար այն ինքնուրույն կազմելը բավականին դժվար կլինի: Բացի այդ, ուսուցիչը գիտի տվյալ թեմայի ուսումնական նպատակները, և նրա կողմից կազմված պլանը սովորողներին կմղի դեպի այդ նպատակները:

Պլանի ամենակարևոր գործառույթն է՝ ***օգնել աշակերտներին շչեղվել բանավեճի թեմայից***: Խումբը, որ հավատարիմ է մնում պլանին, սովորաբար բանավեճն անցկացնում է բարձր մակարդակով՝ պահպանելով սահմանված ժամաքանակը: Վերջապես, ոչ բոլոր բանավեճերն են մանրակրկիտ պլան պահանջում: Կան թեմաներ, որոնք կարող են շատ պարզ, մատչելի պլան ունենալ՝ ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, ո՞րտեղ, ինչո՞ւ, ինչպիսի՞ն է քո կարծիքը: Գնահատվող բանավեճի տևողությունը կապված է պլանի կառուցվածքի հետ և կարող է տարբերվել՝ կախված աշակերտների տարիքից և քննարկվող թեմայից: Ասենք, կարելի է անցկացնել 17-20 րոպե տևողությամբ բանավեճ 6-8 հոգուց կազմված խմբերով, աշակերտների տարիքը՝ սկսած 12 տարեկանից:

Գնահատվող բանավեճի նախապատրաստումը

Այդպիսի բանավեճ անցկացնելու ուսուցչի առաջարկին դասարանը սովորաբար խիստ բացասաբար է արձագանքում: Աշակերտների մեծ մասն առաջարկում է այն փոխարինել գրավոր աշխատանքով կամ սովորական բանավոր պատասխանով: Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանում նրանց հրավիրել 5-7 րոպեանոց փորձնական բանավեճի: Փորձնական բանավեճի դեպքում էլ ճիշտ կլինի պահպանել բանավեճի անցկացման մեզ արդեն ծանոթ ձևը. բանավիճողները դասարանի կենտրոնում, մյուս աշակերտները և ուսուցիչը՝ նրանց շուրջը: Փորձնական

բանավեճի դեպքում աշակերտների մի մասը կարող են գնահատել մյուսներին: Առաջին բանավեճից հետո սովորաբար դրան մասնակցել ցանկացողների թիվը աճում է:

Գնահատվող բանավեճի շնորհիվ սովորողը ձեռք է բերում ուրիշների հետ հաղորդակցվելու և դիմացինին ճիշտ հասկանալու կարողություններ:

Գնահատման թերթիկ

աշակերտներ

		Ա	Բ	Գ	Դ	Ե
+2	Քննարկվող հարցի մասին որոշակի դիրքորոշումը					
+1	Էական, տեղին միտք, դիտարկում, դիտողություն					
+2	Ապացույցներ, որոնք հաստատում են միտքը կամ փաստացի տվյալների մեջբերումը					
+1	Քննարկման մեջ մեկ ուրիշի ներգրավումը					
+1	Հարց՝ միտքը ճշգրտելու կամ քննարկումը շարունակելու նպատակով					
+2	Համանմանություններ գտնելը, զուգահեռներ անցկացնելը					
+2	Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մտքերի բացահայտումը					
+2	Ոչ տեղին դիտողությունների բացահայտումը					
-2	Անուշադրությունը կամ ուրիշների ուշադրությունը շեղելը					
-2	Խոսողին ընդհատելը					
-1	Ոչ տեղին դիտողությունը					

-3	Քնարկման մենաշնորհումը					
-3	Անձնական վիրավորանք					
	Ընդհանուր միավորները					